ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17-18-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

05 մայիսի 2018թ. քաղաք Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ.ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Ռ. Դալլաքյան
Հ. Բաբայան
Հ.Իգիթյան

Հրավիրված Լ.Բակումյան
Ա.Ազարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

Բանանց ՖԱ-ի դիմումի քննարկումը կապված պայմանավորված խաղի կազմակերպման հետ

Հարցը ներկայացվեց Կոմիտեի նախագահ՝ Ռ.Սինոյանի կողմից:

Նա հայտնեց, որ Բանանց ՖԱ-ն 04.05.2018թ. ՀՖՖ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ Բանանց ՖԱ-ի ֆուտբոլիստ Էդվարդ Կպոդոն 03.05.2018թ-ին դիմել է իրենց /դիմումը կից ներկայացված է/ և տեղեկացրել է, որ իրեն Շիրակ ՖԱ մարզիչ Արարատ Հարությունյանի կողմից առաջարկվել է իրականացնել պայմանավորված խաղի կազմակերպում 05.05.2018 թվականին կայանալիք ՀՀ Բարձրագույն խմբի Բանանց-Շիրակ հանդիպման ժամանակ:

Համաձայն Էդվարդ Կպոդոի կողմից ակումբին ներկայացված դիմումի՝ Արարատ Հարությունյանի կողմից իրեն տրվել է նախնական 1000 ԱՄՆ դոլար կանխավճար, իսկ խաղի ընթացքում սխալներ թույլ տալու համար, որի հետևանքով Շիրակ ՖԱ-ն գոլեր կվաստակի, նրան խոստացվել էր ևս 4000 ԱՄՆ դոլար:

Բանանց ակումբը գրությանը կից ներկայացրել է նաև ֆուտբոլիստի և Արարատ Հարությունյանի միջև եղած հեռախոսային զրույցի ձայնագրություններ, ինչպես նաև նրանց միջև եղած տեքստային հաղորդագրությունների պատճենները (screenshot նկարները):

Նույն օրը ՀՖՖ-ի կողմից այդ մասին տեղեկացվել է Շիրակ ՖԱ-ն և առաջարկվել է ներկայացնել իրենց դիրքորոշումը հարցի վերաբերյալ:

Շիրակ ՖԱ-ն 04.05.2018 թ.-ին ՀՖՖ-ին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ իրենց մոտ եղած տեղեկատվության համաձայն՝ Շիրակ ՖԱ-ի աշխատակից Արարատ Հարությունյանը կապ է հաստատել Բանանց ՖԱ-ի ֆուտբոլիստ Էդվարդ Կպոդոյի հետ՝ նախկինում կուտակված պարգևավճարների հետ կապված՝ հաշվի առնելով, որ նշված ֆուտբոլիստը 2017 թվականին հանդես է եկել Շիրակ ՖԱ-ի կազմում: Ըստ Շիրակ ՖԱ-ի՝ հավանաբար, հենց այդ խոսակցության ընթացքում Արարատ Հարությունյանը, առանց նախապես տեղյակ պահելու ակումբի ղեկավարությանը, քննարկել է Կպոդոյի կողմից իր խաղով խաղի արդյունքի վրա ազդելու հարց: Ի հավելումն վերոնշյալի՝ ակումբը նույն գրությամբ փաստում է, որ ակումբի ոչ մի անդամ տեղյակ չի եղել Արարատ Հարությունյանի մտադրության մասին և տեղյակ լինելուն պես անպայման կկանխեր այն: Միաժամանակ ակումբը տեղեկացնում է, որ Արարատ Հարությունյանը նման կոպիտ խախտման համար որպես պատիժ հեռացվել է ակումբից:

Նշված հարցը ներկայացվել է ՀՖՖ փորձագիտական կոմիտեին, որն էլ տվել է եզրակացություն այն մասին, որ՝ <Փորձագիտական կոմիտեն, ուսումնասիրելով Բանանց ՖԱ-ի գրությունը և դրան կից ներկայացված ֆուտբոլիստի (Էդվարդ Կպոդո) համապատասխան հայտարարությունը, ինչպես նաև ֆուտբոլիստի և Արարատ Հարությունյանի միջև հեռախոսազրույցի ձայնագրությունն ու դրա սղագրությունը, եկավ այն համոզման, որ Արարատ Հարությունյանն իր գործողություններով կատարել է ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

Ինչ վերաբերում է Շիրակ ՖԱ-ի այն պնդմանը, որ ակումբը տեղեկացված չի եղել իր աշխատակից Արարատ Հարությունյանի վերոնշյալ արարքի մասին, ապա փորձագիտական կոմիտեն եկավ այն համոզման, որ գործին կցված հեռախոսազրույցների ձայնագրությունները և սղագրություններն այլն են ապացուցում: Բացի այդ, նման պայմաններում Շիրակ ՖԱ-ն ակնհայտորեն հանդիսանում էր իր աշխատակցի գործողությունների շահառուն և հետևաբար նաև պատասխանատուն>:

Կարգապահական կոմիտեն նիստին հրավիրել էր նաև Արարատ Հարությունյանին, ով թեև չներկայացավ նիստին, սակայն հեռախոսակապով ներկայացրեց իր դիրքորոշումը հարցի վերաբերյալ, ինչն իր գիտությամբ նաև ձայնագրվում էր (կցվում է): Վերջինս, մասնավորապես, հայտնեց, որ իր խոսակցությունները ֆուտբոլիստի հետ կապված են եղել ֆուտբոլիստի ապագա հնարավոր տրանսֆերի կազմակերպման և նախկինում նրա հասանելիք պարգևավճարների հետ և որ ինքը որևէ գումար ֆուտբոլիստին խաղի արդյունքների վրա ազդելու համար չի տվել: Արարատ Հարությունյանն ընդհանուր առմամբ փորձեց ներկայացնել իրականությունն այնպես, որ խաղի արդյունքի վրա ազդելու առաջարկը եղել է ֆուտբոլիստի, այլ ոչ իր կողմից, և որին ինքն՝ ըստ էության չի մերժել, փորձել է օգտագործել առիթը, երևի սխալվել է, մեղավոր է:

Կարգապահական կոմիտեի անդամների տարբեր հարցերին, փաստարկներին և ֆուտբոլիստի հետ իր իսկ խոսակցության սղագրության մեջբերումներին Արարատ Հարությունյանը տվեց ընդհանուր առմամբ իրարամերժ, անտրամաբանական, ոչ համոզիչ և փաստական ապացույցներին չհամապատասխանող պատասխաններ:

Համաձայն ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի 12 հոդվածի 1-ին կետի՝

«1. Պայմանավորված խաղերի կազմակերպումը, մասնավորապես՝ Ֆուտբոլիստներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին կամ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ (ոչ սիրողական) ֆուտբոլի մրցումների մյուս մասնակիցներին, կազմակերպիչներին և ֆուտբոլային այլ սուբյեկտներին անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ որևէ այլ անձի համար դրամ, տարադրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ <u>այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը</u> կամ նույն անձանց կողմից ստանալը՝ այդ մրցումների արդյունքների վրա ազդելու նպատակով
Պատժվում է
Ֆիզիկական անձանց համար՝
- տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկ ՀՀ դրամի չափով
- և/կամ որակազրկմամբ /ֆուտբոլիստի համար/ 1-ից մինչև 2 տարի ժամկետով
- և/կամ որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելքով, 3 տարուց մինչև ցմահ ժամկետով:
Իրավաբանական անձանց համար՝
- տուգանքով նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասնհինգհազարապատիկ ՀՀ դրամի չափով
- և/կամ թիմի միավորների նվազեցմամբ 12 միավորի չափով
- և/կամ նվաճած մրցանակներից զրկմամբ
-և/կամ տվյալ առաջնության մասնակցությունից զրկմամբ 12 - և/կամ թիմին ավելի ցածր առաջնություն տեղափոխմամբ
- և/կամ որևէ ֆուտբոլային առաջնությանը մասնակցելու /թիմեր ներկայացնելու/ արգելքով 1-ից մինչև 3 տարի ժամկետով:»

Համաձայն ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի 3-րդ հոդվածի 2-րդ կետի՝

«2. Ֆուտբոլային սուբյեկտները պատասխանատվություն են կրում իրենց անդամների և իրենց կողմից ներգրավված այլ պաշտոնատար անձանց անվայել վարքի և իրենց ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարելու համար:»

Կարգապահական կոմիտեն արձանագրեց նաև, որ պայմանավորված խաղի արդյունքում իրական շահառուն Շիրակ ՖԱ-ն է և որ համաձայն Կարգապահական կանոնակարգի 3-րդ հոդվածի 2-րդ կետի վերջինս, որպես ֆոտբոլային սուբյեկտ՝ ևս պատասխանատվություն է կրում իր պաշտոնատար անձի կողմից կատարված արարքների համար:

Արդյունքում, կարգապահական կոմիտեն, մանրամասն քննելով գործին կցված բոլոր ապացույցները ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համակցության մեջ՝ եկավ այն համոզման, որ իրականում տեղի է ունեցել ՀՀ Բարձրագույն խմբի 2017-2018թթ մրցաշրջանի 27-րդ մրցափուլի Բանանց-Շիրակ թիմերի միջև 05.05.2018թ-ին կայանալիք հանդիպման արդյունքների վրա ազդելու նպատակով պայնավորված խաղի կազմակերպում / ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի 12 հոդվածի 1-ին կետ/ և որ պայմանավորված խաղի կազմակերպան գործընթացի մեջ անմիջականորեն ներգրավված է եղել Շիրակ ՖԱ-ի մարզիչ Արարատ Հարությունյանը:

Ելնելով վերոգրյալներից՝ կարգապահական կոմիտեն միաձայն որոշեց.

1. Արարատ Հարությունյանին ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
2. Շիրակ ՖԱ–ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթհազարապատիկի չափով և ՀՀ Ֆուտբոլի բարձրագույն խմբի ընթացիկ առաջնության Շիրակ թիմի արդյունքները նվազեցնել 12 միավորով:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՖՖ բողոքարկման կոմիտե այն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ